ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<01>> ապրիլ 2015 N 29

ք. Եղեգնաձոր

<<ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 1-ին կետի պահանջի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 9 124 000 (ինը միլիոն մեկ հարյուր քսանչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 9 123 999 (ինը միլիոն հարյուր քսաներեք հազար ինը

հարյուր իններորդինը) Հայաստանի Հանրապետության դրամով՝ 9 123 999 (ինը միլիոն հարյուր քսաներեք հազար ինը հարյուր իններորդինը) հասարակ (սովորական) բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումից հետո կկազմի 1 Հայաստանի Հանրապետության դրամ 1 հասարակ (սովորական) բաժնետոմս 1 Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի հունվարի 21-ի <<<<Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին>> N 3 որոշմամբ հաստատված << Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2-րդ կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խաչիկ Գևորգյանին :

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ 2015թ.

ապրիլի 1-ի թիվ 29 որոշման

<<Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետ

<<4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է մեկ Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է մեկ հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով :>> :

Աշխատակազմի ղեկավար Կ. ՍԱՀԱԿՅԱՆ